



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ Մ Ա Ն

25 հուլիսի 2024 թվականի № 304-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 18-Ի № 126-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ռուբիկ Հարությունյանի անվան Արուսյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի հուլիսի 8-ի № 433, «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի հուլիսի 15-ի № 217 և «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի հուլիսի 16-ի № 62 գրությունները՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 փոքրու պետությանը սեփականության իրավունքով պարկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2023 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակները ու սակագները հաստատելու մասին» № 126-Ա որոշման № 5, № 8, № 9 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ № 1, № 2, № 3 հավելվածների համաձայն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2024 թվականի հուլիսի 25  
ք. Հրազդան



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ